

ազատագրվելով համապատասխան արխիվային նյութերը, պարբերական մամուլը և տեղա պատմագիտական գրականությունը ինչպես հայերեն, այնպես էլ աստերեն և օտար լեզուներով, հեղինակը յազմակողմանի քննության է առնում արևմտահայության հակառակորդ այն գմեղակ տարիներին, երբ իմպերիալիստական տերությունների սանձազերծած համաշխարհային պատերազմը նպաստափոր պայմաններ ստեղծեց երիտթուրքերի կառավարության համար՝ իր-

գործելու հայ ժողովրդի ֆիզիկական քնաշնչման նախապես մշակված իրենց հրեշավոր ծրագիրը։ Մեթոդաբանական ճիշտ ելակետը և պատմականությունը սկզբունքի կիրառումը, փաստական նյութի յազմակողմանի ազատգործման պայմաններում, հնարավորություն են տվել հեղինակին ստեղծելու արժեքավոր աշխատություն, որ կարգացվում է մեծ հետաքրքրությամբ։

Կ. ՓԱՐԱՄԻՅԱՆ

ԼԿՈՒԱՐԿ ԶՐԲԱՇԱՆ, *Թումանյանի պոեմները*: Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1964, 507 էջ, գինը 1 ռ. 14 կ.:

Թումանյանի, իբրև հայ ազգային ամենախոշոր րանաստեղծի գնահատման պատմությունը հետաքրքրական շատ կողմեր ունի։ Լավագույն թումանյանական ստեղծագործությունները նրանց հրապարակման տարիներին երբեմն սառը կամ մերժողական վերաբերմունքի են արժանացել։ 1910-ական թվականներից է սկիզբ առել Թումանյանի ստեղծագործության ուժն ու խորությունը աստիճանաբար հասկանալու և գնահատելու ժամանակաշրջանը։ Սակայն որքան էլ այդ զարմանալի թվա, գրականագիտական միտքը ղեկնս երկար ժամանակ տարրեր, հաճախ լուրջ վերապահություններ էր անում Թումանյանի ստեղծագործության արժեքի վերաբերյալ։ Նույնիսկ Թումանյանին բարձր գնահատող գրականագետները թումանյանական հանձարի ողջ մեծությունը և կախարդանքը լիովին չէին տեսնում։ Հետաքրքրական է, որ ոչ թե գրականագետները, այլ գրողներն ու բանաստեղծներն էին առաջինը, որ զգացին, թե ինչպիսի հսկա է խոյացել հայ մշակույթի անուստանում։

Միայն 1930 և մանավանդ 1940-ական թվականներից էր, որ գրականագիտական միտքը սկսեց ավելի խոր թափանցել Թումանյանի ստեղծագործության մեջ։ Սկսեցին լուրջ փորձեր անել Թումանյանի արվեստի, նրա մարդասիրական մեծ գաղափարների լիարժեք ըմբռնման ուղղությամբ։

Գրականագիտության ասպարեզում արդեն գիտակցվում էր Թումանյանի արվեստի իրական ուժը, բայց թիչ ղեկավարում էր այդ գիտակցրվածը խոր ու բազմակողմանի վերլուծության առարկա դառնում և հրապարակ հանվում։ Վաղուց ի վեր զգացվում էր մի ծանրակշիռ ուսումնասիրության պակասը։

Ահա այդպիսի ուսումնասիրություն է գրականագետ էդուարդ Ջրբաշյանի «Թումանյանի

պոեմները» դիրքը։ Այսօր դա ամենահանգամանալից և, ամենայն իրավամբ, ամենարժեքավոր ուսումնասիրությունն է՝ նվիրված Թումանյանի ստեղծագործությանը։

Անկասկած է, որ Թումանյանի ստեղծագործության մեջ նրա պոեմները կենտրոնական տեղ ունեն, ուստի և կարողանալ ճիշտ գնահատել այդ պոեմները, նշանակում է հիմնականում ճիշտ արժեքավորել նաև գրողի ողջ ստեղծագործությունը։ Այստեղից էլ պարզ է, որ Ջրբաշյանի ընտրած թեման այնպիսին է, որ հաղթահարել այն, նշանակում է մի զգալի չափով հաղթահարել Թումանյանի ողջ ստեղծագործության գիտական գնահատման հարցը։ Մյուս կողմից, Թումանյանի ողջ ստեղծագործությունը մի անքակտելի միասնություն է, և ուսումնասիրության համար այնտեղից ընտրել զուտ ժանրային, այսինքն՝ ձևական առումով իրար հետ առնչվող մի շարք գործեր, փոքր-ինչ վտանգավոր է։ Մի աննկատ անզգուշություն, և գրականագետը կարող է ընկնել միակողմանի գնահատականների խաբուսիկ ուղին։ Ջրբաշյանի գրքի մի կարևոր արժանիքն արդեն այն է, որ պոեմների քննությունը կատարված է Թումանյանի ողջ ստեղծագործության, ինչպես և նրա սշխարհայացքի, գեղագիտական ու բարոյագիտական բմբռնումների ողջ համակարգի հաշվառմամբ՝ Թումանյանի պոեմները մեկուսացված չեն քննվում, այլ դիտվում են իբրև գրողի ստեղծագործության անբաժանելի օղակները և միշտ համադրվում ու համեմատվում են թումանյանական մյուս ստեղծագործությունների հետ, հաճախ վերլուծվում են նրանց օգնությամբ։ Նույնիսկ ավանդաբար իրարից տառերի դիտված թումանյանական ստեղծագործությունները իրար համադրելով՝ հեղինակը ցույց է տալիս նրանց ներքին ընդհանրությունը։ Այդ տեսակետից ուշագրավ է «Ինչպիսի անհունը»

պոեմի և քառյակների ու այլ քնարական գործերի համադրումն ու զուգահեռ վերլուծությունը, ինչպես և «Թմկարերդի առումը» քննելիս թումանյանական այլ գործերի օգնության դիմելը:

Բայց Թումանյանի ողջ ստեղծագործությունն է՝ իր հերթին հայ գրականության օղակներից մեկն է: Եվ Ջրրաշյանը հենց այդպես մոտենալով Թումանյանի պոեմներին՝ դրանք վերլուծում է հայ գրականության ընդհանուր շրջապատի մեջ, հատկապես ուշադրության առարկա դարձնելով այդ պոեմներին նախորդած և նրանց հետ միաժամանակ հրապարակ եկած ստեղծագործությունները:

Աշխատության հենց սկզբից զգացվում է գրական երևույթների և մասնավորապես հայ գրական կյանքի խոր ու բազմակողմանի իմացություն: Հաճախ գրականագետը փաստերի ճիշտ գնահատմամբ կարողանում է ցույց տալ ավանդական դարձած որոշ պատկերացումների միակողմանի լինելը: Որինակ, «Թումանյանի էպիկական ունի ձևավորումը» գլխում հեղինակը կարողանում է լիովին համոզել, որ բանաստեղծի մի նամակում (գրած Յու. Վեսելովսկուն) տեղ գտած մտքերը փոքր-ինչ այլ կերպ պիտի հասկանալ: Թումանյանը գրել է, որ ինքը պոեմներ ստեղծելու գործում հետևել է Պուշկինին ու լերմոնտովին և չի օգտվել հայ գրականության նախորդ փորձից: Ջրրաշյանը անառարկելի փաստեր բերելով՝ ցույց է տալիս, թե որքան անհայտ է Թումանյանի պոեմների կապը Արուսյանի, Պոռոշյանի և Աղայանի մի շարք ստեղծագործությունների հետ (ըստ որում, այդ գրողներին Թումանյանը այլ առիթներով համարել է իր անմիջական նախորդները): Բրավա ցիտրեն նախաթումանյանական շրջանի լավագույն հայ պոեմը համարելով Աղայանի «Տորք Անգեղը»՝ Ջրրաշյանը գրում է. «Հերոսության ու գեղեցկության ժողովրդական ըմբռնումներով, նկարագրությունների թափով ու մաշտաբներով «Տորք-Անգեղը» կարող է համարվել Թումանյանի պոեմներին նախորդող կարևոր ստեղծագործություններից մեկը» (էջ 21):

Ուսումնասիրողը անժխտելի է համարում նաև Ալիշանի, Պատկանյանի ու Րաֆֆու գրական փորձի օգտագործումը Թումանյանի կողմից, ինչպես և հայկական ժողովրդական բանահյուսության վեպական դերն այդ հարցում: Այլ կերպ ասած, Ջրրաշյանը փաստում ու հաստատում է այն ճշմարտությունը, որ Թումանյանի պոեմները հայ գրական հողի վրա են աճել և ապա նոր սնվել նաև համաշխարհային գրականության անկողնից: Ըստ որում, Թումանյանի համար հատկապես կարևոր են եղել Պուշկինի, լերմոնտովի, Բայրոնի ստեղծագործական նվաճումները:

Այնուհետև, ճիշտ է պատկերված Թումանյանի ստեղծագործական կյանքի անցումը մի շրջանից (1890-ական թթ.) մյուսին (1900-ական թթ.): Թե՛ գրական, թե՛ լեզվական ոճերի տեղափոխից նկատելիորեն տարբեր են այս երկու շրջաններում բանաստեղծի կողմից գրված մի շարք գործեր: Այդ տարբերությունը հատկապես զգացվում է Թումանյանի մի քանի պոեմների առաջին ու երկրորդ տարբերակների միջև: 1890-ական թթ. հրապարակված պոեմներից մի քանիսը («Մարո», «Անուշ», «Լուսնի Սաքո») Թումանյանը վերամշակեց և բոլորովին նոր ոգի ու ձև տալով վերահրատարակեց, մյուսները («Մեհեր», «Ալեք», «Մերժված օրենք») մնացին իրենց նախնական վիճակում և չվերահրատարակվեցին բանաստեղծի կողմից, որպես նրա ստեղծագործական հակումներին ոչ հարազատ գործեր:

Ջրրաշյանը դիտել է Թումանյանի ստեղծագործական կյանքի այս երկու շրջանների տարբերությունները բոլոր նրբություններով և ճիշտ պատկերել մի շրջանից մյուսին անցնելու կարեւոր երևույթի էությունը: Եթե առաջին շրջանի պոեմների համար բնորոշ է լեզվի նկատելի արհեստականությունը, վերամշակված ոճը, նկարագրությունների ձգձգվածությունը, կերպարների թուլությունը, զգացմունքի պակասը, ապա երկրորդ շրջանի պոեմները ժողովրդական առույգ խոսքով հագեցված լեզվի մեջ մարմնավորում են մարդկային խոր զգացմունքներ, մարդասիրական մեծ գաղափարներ, ժողովրդի իրական կյանքն ու ձգտումները, գրական հյուսիսի կերպարներ:

Ուշադրության են արժանի ուսումնասիրության այն մասերը, ուր Ջրրաշյանը խոսում է Թումանյանի լեզվական արվեստի զարգացման մասին: Ծիշտ է արել ուսումնասիրողը, իր աշխատության մի շարք մասերում հանգամանորեն խոսելով Թումանյանական լեզվի հարցերի մասին: Առաջին և երկրորդ շրջանի գործերի լեզվից բերված նմուշները համեմատելով՝ Ջրրաշյանը ցույց է տալիս, թե ինչպես լրագրային հաճախ անկենդան, հնարույր լեզվից Թումանյանը գնացել է դեպի ժողովրդային, հյուսիս, կենդանի խոսքը՝ հարուստ դարձվածքներով ու ոճերով: Թումանյանի պոեմների հին և նոր ոճերի համեմատումից Ջրրաշյանը արձանագրում է. «...դժվար չէ նկատել պատմելաձևի մեջ ինչ-որ բոլորովին նոր բան, որը հարազատ Թումանյանական, ժողովրդական երանգ է տալիս նրան: Ինչի՞ց է դա ծնվում. մի քանի զուտ գրական ձևերի փոխարինմամբ ժողովրդական լեզվի համապատասխան միջոցներով» (էջ 56):

Ջրրաշյանը այլևայլ առիթներով կարողանում է վեր հանել Թումանյանի մշակած ժողովրդային

լեզվի հսկայական հնարավորությունները, լեզու, որով ստեղծվել է և՛ հայ գյուցազնավեպի լավագույն մշակումը («Սասունցի 'Իսվիթ»), և՛ մեր փիլիսոփայական իրոք ամենախոր պոեմը («Իեպի անհունը»)։

Այնուհետև, ուշագրավ է թումանյանական պոեմի կարևոր հատկանիշների բացահայտումն ու թվարկումը Ջրբաշյանի կողմից (էջ 44—57), որ մեր գրականագիտության մեջ առաջին անգամ է արվում այդպիսի լրիվությամբ։ Այստեղ էլ ուզում ենք անել մի դիտողություն։ Ինքնուրույն վերլուծությունների ու մտորումների շնորհիվ միանգամայն համոզիչ պատկերելով Թումանյանի, եթե կարելի է ասել, պոեմագրության երկու շրջանների տարբերությունները, մեկից մյուսին անցնելու հանգամանքները՝ Ջրբաշյանը ուզում է անպայման այդ բանը տեղագրել գրականագիտության մեջ ընդունված «կլասիցիզմից ռոմանտիզմ, ռոմանտիզմից ռեալիզմ անցում» հանրահայտ սխեմայի մեջ։ Օրինակ, 1890-ական թթ. պոեմները անվանելով ռոմանտիկական, իսկ 1900-ական թթ.՝ ռեալիստական, գրականագետը Թումանյանի գրական կյանքում փորձում է տարբերել ռոմանտիզմի և ռեալիզմի շրջաններ։ Բայց քանի որ նա լավ գիտի, որ 1890-ական թթ. էլ Թումանյանը մի շարք գործեր ունի իր երկրորդ շրջանի ոճով գրած, որոնց ոչ մի կերպ ռոմանտիկական անունը չի սագում, ուստի ստեղծում է պատրաստի սխեմայի մեջ շտեղծվող երևույթները արդարացնող պատճառաբանությունների մի բարդ և խճճված ցանց։ Ջրբաշյանի վերլուծությունները, մտորումները հրաշալի են առանց սխեմաների, երբ նրանք ինքնուրույն են, ինքնաբերիկ։

Թումանյանի էպիկական ունի ձևավորման պատկերը տալուց հետո Ջրբաշյանն անցնում է առանձին պոեմների վերլուծմանը։ Նշելի են այդպիսի վերլուծման վերնագրերը՝ «Լեռներ և մարդիկ», «Կյանքի և մահվան առեղծվածի հանդեպ», «Թումանյանի երազանքը», «Արվեստի հրաշագործ ուժը» և այլն։ Այսպիսի վերնագրերը ոչ միայն փրկում են գրականագիտական ուսումնասիրությունը շուր, միապաղաղ «ակադեմիզմից», այլև բնորոշում, թե ինչ ուղղությամբ է տարվելու տվյալ երկի վերլուծությունը։ Ջրբաշյանը իր ողջ շարադրանքն առաջ տանելիս անընդհատ աչքի առաջ է ունեցել հայ քննադատական մտքի զնահատականները՝ տրված Թումանյանի պոեմներին և ողջ ստեղծագործությանը։ Նա մերթ հակադրվում և վիճում է իր նախորդների հետ, մերթ նշտումներ մտցնում նրանց ասածների մեջ, մերթ հաստատում նրանց մրտերը, մերթ էլ հենվում այդպիսի մտքերի վրա։

Շատ լավ պետք է զգալ ու հասկանալ Թումանյանական արվեստը՝ ճիշտ մեկնելու համար

մեծ գրողի վերաբերմունքը հայ նահապետական կյանքի նկատմամբ։ Ժամանակին որքան սխալ, մտացածին բացատրություններ են տրվել այդ հարցի վերաբերյալ։ Գրականագետից պահանջվում է նախ մտքի ճկունություն Թումանյանի նման հեղինակի աշխարհայացքը ճիշտ գնահատելու համար։ Իրոք, մենք ունենք «Մարոն», «Հոռեցի Սաքոն», «Անուշ», բոլոր դեպքերում էլ հերոսները շատ ողբերգական գոհեր են նահապետական բարքերի։ Անճկուն մտածող գրականագետը շտապում է եզրակացնելու, թե Թումանյանը մերժում է հայ նահապետական կյանքը։ Մինչդեռ Ջրբաշյանն աշխատում է թափանցել բանաստեղծի մտահղացումների խորքերը պարզելու համար իսկությունը։ Եվ իրավացի է գրականագետը, երբ Թումանյանի բանաստեղծական ներշնչանքի աղբյուրը, այնուամենայնիվ, համարում է հայ նահապետական գյուղը։ «Ժողովրդական կյանքը նահապետական գյուղում» — գրում է Ջրբաշյանը, — Թումանյանի համար բանաստեղծական էր ամենից առաջ այն բնական, անաղարտ ձևերով, որոնք զերծ էին անացել բուրժուական «քաղաքակրթության» ավերիչ ազդեցությունից՝ զգացմունքների մաքրություն, անմիջականություն, բնավորության և «արդկային հարաբերությունների պարզություն և ազնվություն» (էջ 89)։ Եվ ապա՝ «Թումանյանը սուր կերպով քննադատել է սոցիալական հակասությունները, որոնք ուժեղանում էին բուրժուական հարաբերությունների ներթափանցման հետևանքով («Հառաչանք»), հետևաբար, Թումանյանը չէր կարող ամբողջությամբ վերցրած զրվատել այդ իրականությունը, չէր կարող նրա հետ կապել անհատի և հասարակության զարգացման ցանկալի իդեալը։ Բայց, մյուս կողմից, Թումանյանի հայացքի ինքնատիպությունն այն էր, որ նա նահապետական աշխարհում նկատում էր դրվատանքի արժանի կողմեր, նրա «արդկանց մեջ տեսնում էր նաև գեղեցիկ, վեհ հատկանիշներ»։ Իրոք, եթե Անուշն ու Սաքոն հին գյուղի բարքերի գոհերն են, բայց չէ՛ որ նրանք միաժամանակ այդ գյուղի իսկական ներկայացուցիչներն են. «գեղեցիկ, վեհ հատկանիշներով»։

Թումանյանի տարբեր պոեմների վերլուծությունը Ջրբաշյանը տարբեր մոտեցումներով է առաջ տանում։ Այսպես, եթե «Անուշը», «Թմկաբերդի առումը», «Հազարան բլրուլը» վերլուծվում են իրենց արժանիքների ամբողջության մեջ, ապա «Մարոյի» և «Հոռեցի Սաքոյի» վերլուծությունը ավելի շուտ առաջ է ընթանում այդ պոեմների հետ կապված այս կամ այն թեզը հիմնավորելու նպատակով։ Օրինակ, աշխատության մեջ «Հոռեցի Սաքոյին» նվիրված հատվածում գլխավոր ուշադրությունը նվիրվում է

քանիցս արտահայտված այն տեսակետի հերքմանը, ըստ որի իբր Սաքոյի խելագարությունը պոեմում պատճառարանված չէ: Ջրրաշյանը կողմնակի մի շարք փաստերով ցույց է տալիս, թե որքան բնորոշ է եղել հայ գյուտի համար Թումանյանի պատկերածը: Գրականագետը նորը դիտողություններով բացահայտում է նաև բանաստեղծի կատարած աշխատանքը պոեմի վերջավորությունը ղեկավարված ստեղծման համոզիչ դարձնելու ուղղությամբ: Ցույց է տրված, թե ինչպես մի քառատողի տեղափոխությունն անդամ վճռական է դարձել պոեմի գեղարվեստական արժեքի համար:

Համոզիչ խոսքեր են ասված նաև «Հառաչանքի» մասին: Բայց այս առիթով մի այլ հանգամանք զրավեց մեր ուշադրությունը: Բացահայտելով այն նախապայմանները, որոնք «Հառաչանքի» ստեղծման ազդակ են դարձել՝ Ջրրաշյանը մեր առջև բացում է պատանի Թումանյանի ոգևորությունների մի զեղեքիկ շրջանակ, ուր կարևոր դեր են կատարել մի կողմից՝ Օիլիբրի Կարլ Մոորը, մյուս կողմից՝ լոռեցի Չոփուտի տղերքը: Ընդ որ միայն հավանական, այլ համոզիչ է թվում այս առիթով հեղինակի տված մի ծանոթություն այն մասին, որ Թումանյանի «Հառաչանքի» և Փափազյանի «Չոչո քարի» ըմբոստ հերոսներն ունեցել են միևնույն նախակերպարները՝ 1886 թ. լոռվա ձորերում հանուն արդարության «ավազակություն» սկսած Չոփուտի տղաները:

Գրքի ամենից ավելի մեծ ներշնչանքով զրված մասերը «Անուշի», «Թմկարերդի» վերլուծությանը նվիրված գլուխներն են: Լեյդ երկու պոեմների մեջ ամենից ավելի ուժեղ է փայլատակել Թումանյանի հանճարը, և դրականագետը իրավացիորեն ամենից ավելի շատ միտք և կորով է դրել նրանց մեծությունն ու հմայքը բացահայտելու համար: Կարողում ենք Ջրրաշյանի մոտորումները և զգում. որ նախ իբրև ընթերցող, իբրև Թումանյանի շերտ երկրպագու նա բաղմիցս ապրել ու վերապրել է «Անուշն» ու «Թմկարերդը», ինչպես և բանաստեղծի ողջ ստեղծագործությունը և ապա իբրև գիտնական տարիներ շարունակ մտորել նրանց մասին: Լեյդ է պատահոր, որ խստաշունչ, երբեմն «սառոր» դիտական վերլուծումների մեջ անբնական զգացվում է մի ներքին ջերմություն, սեր ղեպի քրնքնվող նյութը: Սրկու պոեմների մեջ էլ տարրեր ձևերով մարմնավորվել է Թումանյանի մարդասիրական մեծ իղևալը: Լեհա զրականագետի ուշադրության կենտրոնում հենց այդ իղևալն է, իսկ նպատակն է՝ ցույց տալ, թե ինչպիսի ձևերի մեջ է այն արտահայտվում: Ընդ ինչպիսի սիրով ու երկյուղածությամբ է նա մոտենում «Անուշի»՝ հայ գրականության այդ ամենա-

վալյուն գոհարի վերլուծությանը: «Հիրավի, զարմանալի, անկրկնելի պոեմ է «Անուշը»... — գրում է Ջրրաշյանը, — ահա, թե ինչու անհնար է առանց ներքին տաղանայի դիմել այս պոեմի վերլուծությանը: զրականագիտական հասկացությունների մեջ չի՝ կորչի արդյոք պոեմի եզակի հմայքը, միակողմանի չի՝ ներկայացվի նրա անսպառ բովանդակությունը» (էջ 134): Գրականագետը կարող է վստահ լինել, որ նրան հաջողվել է զգուշորեն, նորորեն ներկայացնել Թումանյանի գլուխգործոցը, բացել նրա իրոք եզակի հմայքի գաղտնիքներից շատերը, ընթերցողին է՝ ավելի սիրելի և հարազատ դարձնել «Անուշը»:

Գեղագիտական տեսության համար շատ ուշագրավ են Ջրրաշյանի դիտողությունները «Անուշի» վերամշակման կապակցությամբ: Գրականագետը ցույց է տալիս, որ պոեմի առաջին արբերակում 728 տողերի մոտ կեսը հեղինակի քնարական շեղումներն են եղել, իսկ մշակումից հետո այդ շեղումները ընդգրկող տողերի թիվը դարձել է 42: Ընդ շնայած դրան, «Անուշի» մշակված տարրերակր շատ ավելի մեծ քնարական շունչ ունի, քան առաջինը: Սգրակացությունն այն է, որ մի վիպերգական (էպիկական) ստեղծագործության քնարականությունը ամենելիքն էլ ուղիղ համեմատական չէ քնարական շեղումների քանակին, որ այստեղ դեր են խաղում այլ գործոններ: Ընդ հմտորեն բացահայտված են այդ գործոնները: Գրականագետը ցույց է տալիս, որ հեղինակային շեղումների կրճատման հաշվին «Անուշում» ավելացել է հերոսների ուղղակի խոսքը, որը խորապես գեղումների բնույթ ունի և որը ավելի քնարական է դարձրել ողջ գործը: Նույնիսկ պոեմի գործողությունը հաճախ զարգանում է հերոսների խոսքի օգնությամբ: Ջրրաշյանը «Անուշն» իրավացիորեն համարում է մի կողմից վիպերգական, մյուս կողմից քնարական-թատերադրական (դրամատիկ) պոեմ:

Ըիշտ է դիտված «Անուշի» լեզվի մեծ «տարողունակությունը», այն, որ քիչ խոսքով զարմանալիորեն շատ բան է կարողանում ասել հեղինակը: Թափանցելով բանաստեղծի ստեղծագործական աշխատանքի գաղտնարանները՝ զրականագետը կարողանում է ցույց թալ Թումանյանական խոսքի այդ կախարդանքը սլայմանավորող մի շարք գործոններ: Իրանցից մեկն է կրկնությունն ու դադարը: «Կրկնությունները, — գրում է Ջրրաշյանը — ձևեր են բերել բովանդակային, զարմանալի խոր իմաստ, անզամ լոռությունը երբեմն արտահայտում է այնքան շատ բան, որ մի ուրիշ բանաստեղծ տասնյակ տողերով հազիվ արտահայտեր» (էջ 186): Համեմատելով «Անուշի» հին և նոր տարրերակները՝

մի հատվածը, գրականագետը ցույց է տալիս, թե ինչպես Թումանյանը այդտեղ 18 տողից թողել է ընդամենը չորսը, որոնք, սակայն, շատ ավելի են արտահայտում (էջ 172)։ «Միայն չորս տող,— գրում է Ջրբաշյանը,— բայց ինչքան մեծ յուզանդակություն կա նրանց մեջ և մանավանդ տողերի արանքում, ինչքան շոշափելի է ցուցադրված այստեղ գյուղական ամբոխի սարսափը, աղմուկն ու իրարանցումը, ուշակորույս Անուշի վիճակը...» (էջ 172—173)։

Քննարկվող գրքի կարևորագույն արժանիքներից է այն, որ գրականագիտական-տեսական մեծ պաշարը, բանասիրական մանրակրկիտ աշխատանքը և դեղագիտական բարձր ճաշակը պուզակցվել են իրար։ Փաստալիզ է դիրքը, ներկայացված են բանասիրական որոնումների ամենատարբեր արդյունքները, միաժամանակ ամեն մի գնահատականի ու վերլուծության մեջ զղացվում են գիտնականի լայն մտահորիզոնը և գեղագետի առողջ բմբռնումները։

Առաջներում շատ է ասվել, որ իբր Թումանյանը հոգեբանական կերպարներ կերտելու հարուստ թույլ է, ուրիշ գրականագետներ փոքր են հերքել այդ, սակայն մեծ մասամբ հերքումները հայտարարությունների բնույթ են կրել։ Ջրբաշյանը քաջ իմանալով այդ հարցի շուրջ եղած բոլոր տեսակետները, ինչպես և այն, որ կերպարների կերտման խնդիրը համաշխարհային գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից յուրօրինակ միջոցներով է լուծվել՝ փորձում է բացահայտել Թումանյանի յուրօրինակությունը այդ հարցում։ Այստեղ ևս գրականագետին օգնում է պոեմների մշակման հետ կապված տարբերակների բանասիրական համեմատումը։ Այլ, ի վերջո, համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ կերպարներ կերտելու թումանյանական հնարանքը ոչ այնքան հեղինակային բնութագրումների առավել տարածված միջոցով է կատարվում, որքան հերոսների ներքին խոսքի, նրանց երգերի և խոսակցությունների կամ հոգեկան վիճակի արտաքին նշանների պատկերման ճանապարհով (էջ 381—382)։ Այլ գրականագետը բացում է հերոսների այդ «ներքին» խոսքը, ցույց տալիս «արտաքին նշանների» տակ թաքցրվածը ու համոզում, որ իրոք, անսահմանորեն մեծ հոգեբան է եղել Թումանյանը։ Ընթերցողը հնարավորություն է ստանում տեսնելու, թե ինչպիսի «աննկատելի» միջոցներով է ստեղծվել անհատականացրել բանաստեղծը իր մեկը մյուսից մարդկային, մեկը մյուսից անմոռաց կերպարները։

Երական կերպարների և թումանյանական գաղափարների բացահայտման ուղղությամբ է առաջ տարվում նաև «Թմկաբերդի» վերլուծությունը։

«Արվեստի հրաշագործ ուժը» գլխում խոսվում է Թումանյանի «Հազարան բլրուլը» անավարտ պոեմի մասին, որով հեղինակը արտահայտելու էր իր փայփայած գաղափարներից մեկը՝ այն, որ արվեստը, հատկապես երաժշտությունը, կարող է մարդուն ազատել նրա վատ հատկություններից և ավելի բարի ու կատարյալ դարձնել։ Ջրբաշյանը պոեմի պահպանված կտորներից կարողանում է մտովին ամրողացնել ստեղծագործությունը և բացահայտել նրա գեղարվեստական մեծ արժեքն ու նշանակությունը Թումանյանի ստեղծագործության և ողջ հայ գրականության համար։

Այնպես գրականագետը ամրողական պատկերացում է տալիս նաև Թումանյանի մի այլ պոեմի մասին, որից նույնպես հատվածներ են պահպանվել։ Խոսքը վերաբերում է «Հին կոիվը» հայրենասիրական պոեմին։ Ահա այս առիթով էլ Ջրբաշյանն անդրադառնում է Թումանյանի քնարի մի ուրիշ հիմնեղանակին՝ հայրենասիրությանը և դարձյալ ճիշտ բնորոշում այն։ Մարդասիրության մեծ երգիչն ու քարոզիչը հայ ժողովրդի ազատագրության հարցերում էլ հավատարիմ է եղել իրեն։ Թումանյանին խորթ են եղել ազգային «բացառիկության», ինչպես և հայրենիքի գաղափարը միայն «արյուն ոթելու» մեջ տեսնելու հակումը։ «Հին կոիվը» պոեմի մասը կազմող հայտնի «Հայոց լեռներում»-ը լավ է ներկայացնում Թումանյանի հայրենասիրության ոգին։

Աշխատության մեջ առանձին տեղ է գրավում «Ժամանակակիցներ և հաջորդներ» վերջին գլուխը, ուր լուսարանվում է ընդհանրապես հայ պոեմի զարգացումը Թումանյանի գրական գործունեության տարիներին և նրանից հետո։ Բնորոշվում է Թումանյանի դերը և թողած ազդեցությունը հայ պոեմի զարգացման գործում։ Այնուհետև, հակիրճ ու դիպուկ բնութագրվում են Ա. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Ռ. Որբերյանի, Սիամանթոյի, Դ. Դեմիրճյանի, Ռ. Սևակի պոեմները։

«Թումանյանի պոեմները» գիրքը հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ հեղինակի հետ բանավեճ մղելու առիթ է տալիս։ Զգացվում է, որ հեղինակը այս կամ այն հարցը բարձրացնելիս հնարավոր ընդդիմախոսությունները նկատի է ունեցել և, այնուամենայնիվ, մնացել իր տեսակետին։ Այդպիսի վիճելի հարց է, մեր կարծիքով, Թումանյանի բնապաշտության (պանթեիզմի) խնդիրը։ Ջրբաշյանի թեզերը համոզիչ են, երբ նրանք վերաբերում են բանաստեղծի բնապաշտությանը բառի սովորական իմաստով, երբ բացահայտվում է անարատ բնության դերը Թումանյանի ներշնչանքի և մտահղացումների գրեթե ամբողջ հարցում։

Բայ՞ զրականագետի փաստարկներն անհամոզիչ են դառնում, երբ նա սկսում է խոսել Թումանյանի փիլիսոփայական բնավաշտության մասին և մանավանդ, երբ աղերս է տեսնում Թումանյանական բնավաշտության և Սպինոզայի փիլիսոփայական համակարգի միջև: Մեր համոզմամբ Թումանյանը բնավաշտ էր ըստի սոցիորական իմաստով: Դիշտ է նաև, որ այդ բնավաշտությունը առնչվում է մեծ գրողի աշխարհայացքի հետ, որ բյուրեղացել է հատկապես ճառյակներում: Բայց հազիվ թե ճիշտ լինի այն կոչել բնավաշտական փիլիսոփայություն և մանավանդ կապել փիլիսոփայական այս կամ այն հայտնի համակարգի հետ:

«Թումանյանի պոեմներում» ուշադրություն է գրավում նաև աշխատության կոռ կառուցված-

քը: Ջրրաշյանը հիացմունքով է խոսում Թումանյանի պոեմների զարմանալի կոռ կառուցվածքի մասին, մենք էլ ուզում ենք հատկապես նշել զրականագետի գիտական այս աշխատանքի կոռ կառուցվածքը: Ողջ ուսումնասիրությունը մի անքակտելի ամբողջություն է, զերծ ավելորդություններից, մանավանդ՝ կրկնություններից:

Էդ. Ջրրաշյանի այս աշխատությունը ոչ միայն Թումանյանագիտության լավագույն երկն է այսօր, այլև ողջ հայ զրականագիտության նշանակալի նվաճումներից է, մի լավ օրինակ այն բանի, թե ինչպես պետք է գիտականորեն վերլուծել, ուսումնասիրել ու գնահատել մեծ գրողների ստեղծագործությունները:

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ.

ԳՐ. ՀԱԿՈՐՅԱՆ, *Ներսես Ենոքյանի, ՀԱՍՈՒ ԳԱ հրատարակչություն*, Երևան, 1964, 298 էջ, գինը 83 կ.

Մեր միջազգային զրականության մեծագույն գեներալից է Ներսես Ենոքյանին: Անցյալում նրա գործերն ամենից շատ են ազդեցվել, բայց վերջին հրատարակությունը եղել է մոտ 150 տարի առաջ: Եսթը մեկ զար առաջ, 1873 թ. հրատարակված «Ենոքյանի և պարագայ իր» եղանակով աշխատությունը Ղ. Ալիշանը նպատակ ուներ վեր հանել Ենոքյանի կյանքի, եկեղեցական-հրատարակական գործունեության, մամուլական-չորանի իրական պատկերը, այսինքն՝ այն հանգամանքները, կամ իր խոսքով՝ պարագաները, որոնք կարևոր են Ենոքյանի ստեղծագործությունը համակողմանորեն վերլուծելու և արժեքավորելու համար: Այս վերջին հարցը զարմ էր նրա նպատակից: Վաղուց էր զգացվում, որքան, Ենոքյանի մասին մենագրությունն անհղձելու կարիքը, և շնեք ասում, որ շատ է ուշացել նրա ստեղծագործության ամբողջական դիտարկման հրատարակությունը:

Գլխավոր հակորյանը «Ներսես Ենոքյանի մենագրությունը» ձգտում է վերացնել այդ բացը: Հիմնական աշխատության մեջ վերանայում է միջնադարյան մեծ բանաստեղծի նրա կապված հենարանային և այլ կարգի գլխիկ հարցերը, որոնցում, նրանում որոշ մանրամասներ, Գրականագետներից ոմանք հենվելով Ենոքյանի

Յի նրանեղից վաճառանի

Յնմ տալիսին հեղինակ բանի...

և այլ աղբյուրի վրա, եղանակացրել են, թե հանգամանքների թերթով Ենոքյանի հիմնավոր հիմնական չի առաջել: Գր. Հակոբյանը իրա-

վաջիորեն մերժում է բեղունված այս կարծիքը և ճիշտ է գնահատում այդ աղբյուրը:

Պետք է նշել, որ մինչ այժմ անուշադրության էին մատնված Ենոքյանի շարականները, դավանաբանական գրվածքները, գանձերը, Սոցիոմոլոգիայի նվիրված ոտանավորները: Ըսել էլի իսկում էր գրանց մասին, ապա մեծ մասամբ մոռացումը ոչ պատմական էր, գնահատականը՝ միակողմանի: Գր. Հակոբյանը, պնդում է, որ գրանց հայ կյանքից կարված, առաջ չեն: Հոգևոր երգը նա դիտում է որպես խորագրիս ազդեցին, «արևատ, արեհյան», ոչք իր խորքում պահպանել է հայ հեթանոսական բանաստեղծության «արթնը»: Միանգամայն ճիշտ է բեղունելի է Հակոբյանի այն դիտողությունը, թե «առանց Ենոքյանի շարականների վերլուծման, նրա բանաստեղծական պատկերը թերի կլինի» (96): Դասար աշխատում է վեր հանել շարականների աշխատի արժանիքները, նրանց մեջ թաքնված հայկենասիրական-աշխարհիկ տարրերը, սա աշխատության հիմնական ուղղություններից մեկն է:

Ենոքյանի շարականները գնահատելիս անհրաժեշտ էր գրանք քննել այդ մանրի համադրակերպում, որպեսզի լիովին բացահայտվեր ու հասկանալի դառնար հեղինակի միանգամայն ճիշտ, բայց սուս որպես հայտարարության մնացած այն կարծիքը, թե Ենոքյանի բացառիկ գեթ է շարականների հեղինակների մեջ:

Մեղգծելով, որ Ենոքյանին շարական հետք է գործել աշխարհիկ գործիչներին, առաջին անգամ հոգևոր երգի մեջ տեղ է ափել հայ կնոջը...